



**ՓԱՐԻՔԻ ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ
ՄԻՈՒԹԻՒՆ**

Բժշկական Միումբիւնը իր տա,նիկերէի ժողովը գումարեց Յունիս 15ին: Տօքթ. Վ. Թորգոմեան ժողովին ներկայացուց 1200 կրամ կշռող ճարպուռ մը (*lipôme*) զոր հանել տուած էր 52 տարեկան կնոջ մը ձախ սրունքի միսերուն մէջէն, ուր կը գտնուէր 12 տարեի ի վեր:

Տօքթ. Զիլինկիրեան շահեկան դասախօսութիւն մը ըրաւ Պօմբելոյի հակազդեցութեան մասին (*réaction de Boileho*), արիւնի տեսակ մը քննութիւն որ շատ մը պարագաներու մէջ Յոյ կուտայ քաղցկեղի ախտաճանաչումը: Ճրանասցի Տօքթ. Օռէյ, մասնագէտ մը, օմաթիւ-Պիք մը ներկայացուց, ապացուցանելու համար թէ Պօմբելոյի հակազդեցութիւնը 70—80 % ճշգրիտ տեղեկութիւն կուտայ քանսերի ախտաճանաչութեան մէջ:

Տօքթ. Իզմիրլեան հաղորդագրութիւն մը ըրաւ քաղցկեղային կողատապէ (*pleurésie caméreuse*) բնուած հիւանդի մը մասին, ներկայացնելով իր կողմէ հետաքրքրական դիտողութիւններ:

Տօքթ. Եաղուպ ներկայացուց երիտասարդ մը որ վանայ նահանջի պահուն, ձիէն ինկած ու վիրաւորուած էր այլ ուսուսընէ (*omoplate*): Անկէ ի վեր, հակառակ երկարատև ինճամքներու, շարունակական ցաւ մը նոյն ոսկորի ներքի ելերքին մօտ, զինք անհանգիստ կ'ընէ ու նոյնիսկ կ'արգիլէ աշխատել: Տօքթ. Եաղուպ այն կաթիլը յայտնեց թէ շղային ուռ մը (*neurome*) կազմուած է հոն եւ թէ վիրաբուժական գործողութիւն մը կրնայ բուժել հիւանդը:

Այս եւ նախորդ հաղորդագրութիւններու մասին եղան շահեկան վիճարանութիւններ:

**ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ**

Երեսնի մէջ Յունիսի սկիզբը գումարուեցաւ բժշկական համագումար մը:

Բժ. Մ. Ձարմաճեան, Ալեքսանդրապոլ գաւառի բժշկական վիճակին մասին խօսելով, տուաւ հետեւեալ տեղեկութիւնները.—

Գիւղերուն մէջ կան 9 բուժակայաններ, մէկ հիւանդանոց, քաղաքին մէջ՝ երկու հիւանդանոց, 130 մահճակալով: Երկրաշարժէն յետոյ համաճարակ չէ տեսնուած: Սակայն այցի եւ աղիքի հիւանդութիւնները տարածուած են երկրաշարժէն վերանստուած գիւղերուն մէջ: Աղբաբայի մէջ վննեքական ախտերու դէմ սկսած է պայքար: Զաւթարուի մէջ կը շինուի դեղարան մը, Մուլլա—Կէօքչայի մէջ՝ հիւանդանոց մը, Դուզգեանդի, Բայանդուրի, Թալինի մէջ՝ դարմանատուններ: Մեծ պահանջ կայ բժիշկներու:

Բժշկուհի Ղոնդախչեան Բասարզեալարի շրջանին մասին խօսելով, տուաւ հետեւեալ տեղեկութիւնները.— Բասարզեալարի բնակիչները մատնուած են Յանճը Նախապաշարժներու, այնպէս որ այս շրջանին մէջ բժիշկներուն գործը դժուար է: Գաւառակը ունի 40 գիւղ, ունի մէկ հիւանդանոց, մէկ բժիշկ որ կը հիանի 27 վերստ տարածութեան մը վրայ բաժնուած հիւանդներուն: Խիտ սարածուած են Յրախուման ցոքը, (որովհետև գիւղերուն մէջ բազմեց լըկայ), ճճին (որովհետև գիւղերուն մէջ ճնսիշ չկայ): Սիֆիլիսն ալ նկատուի աւերներ կը գործէ:

Բժ. Ս. Կամսարակաճ ընդհ. գեկուցում մը տուաւ Հայաստանի կարմիր խաչին գործունէութեան մասին: Բժ. Լազարեան, ակնարկելով պատերազմի վտանգին, ուղղութիւններ ցոյց տուաւ կարմիր խաչի ընելիքներուն մասին:

Մահերու թիւը բաւական նուազած է, համաճայն վիճակագրութեանց: Համազումարը, երեք տիստէ վերջ, աւարտեցաւ, եւ պատգամաւորները այցելութեան համար մեկնեցան Արդնի: